Լարիսա ԵԳԱՆՅԱՆ

ՄԵԾ ՄԵՊԱՍԱՐԻ ՎԻՇԱՊԸ

2010թ. Մեծ Սեպասար (հյուսիսային լայնության 41° 03' 12," արևելյան լայնության 43° 49' 00," բացարձակ բարձրությունը 2081մ) սարի հյուսիսարևմտյան լանջի երկարությամբ հայտնաբերվեց ժայռաբեկորներից բաղկացած հսկա մի *վիշապ*: Տարիներ շարունակ այստեղ իրականացվող հնագիտական աշխատանքների ժամանակ սարի այս կողմը նույնպես հետազոտվել էր, սակայն վիշապը չէր նկատվել այն պարզ պատճառով, որ մոտ տարածությունից այն դիտվում է որպես երկար ձգվող ժայռաբեկորների կույտ: Պատկերը հստակ երևում է մոտ 3կմ հեռավորության վրա գտնող Աղվորիկ հնավայրից: Վիշապի պոչից սկսվող փոքր գալարումները, կենտրոնական հատվածում աստիճանաբար մեծանալով և հսկա ալիքի վերածելով, ավարտվում են ահռելի գլխով (նկ. 1): Ժայռաբեկորներից կազմված պատկերը զուգահեռ է Ախուրյան գետին, գլուխն ուղղված է հարավ, գետի հոսանքի ուղղությամբ: Վիշապի երկարությունը պոչից մինչև գլուխը ուղիղ գծով 150մ է: Պոչի ծայրից սկսվում է իրար հերթագայող մեկական քարերով երկար շարք, որն իջնում է մինչև սարի ստորոտը՝ կարծես սահմանազատելով *վիշապի* զբաղեցրած տարածքը:

Վիշապը բնակա՞ն է, թե՞ մարդու ձեռքի գործ. կարծիքները հակասական են: Եվ արդյոք դա՞ է էականը: Այսօր էլ պաշտամունքի առարկա են Սիսիանի պորտաքարը և բազում «*ծակ քարեր*», որոնք բնության կերտածն են:

Վիշապներ անվամբ պաշտամունքային կոթողներ հայտնի են Հայաստանի լեռնային գոտիներից (աղբյուրների ակունքներ, ջրերի մերձակայք, արոտավայրերով հարուստ տեղանք): Հայաստանի Հանրապետության տարածքում վիշապների հայտնաբերման հիմնական վայրերը Գեղամա լեռներն են, Արագածի փեշերը, Սևանա լճի մերձակայքը, Ջավախքը, Շիրակի հյուսիս արևելքը (Դարիկ, Եղնաջուր):[1]

Մեծ Սեպասարի վիշապը, բացի կառուցվածքից և չափերից, մյուս հատկանիշերով համադրելի է *վիշապներ* կոչվող հայտնի կոթողների հետ. ջրի մերձակայք (Ախուրյան գետ և սարի տակից բխող աղբյուր), արոտավայրերով հարուստ տեղանք (Աշոցքի սարահարթ):

Առասպելաբանությունը աշխարհի մասին նախնական պատկերացումների համալիր է՝ խարսխված աշխարհի և այն կազմող բաղադրիչների մասին նախնադարյան մարդու աշխարհընմբռնման զգայական ընկալումներից ձևավորված պատկերային համակարգի վրա:

---

[1] *Տես՝ Ղափանցյան Գ., Հնության մի քանի հիշատակարաններ, «Արարատ» թիվ 1, 1917: Քալանթար Աշխ., Քարե դարը Հայաստանում, «Նորք», թիվ 5-6, Եր., 1925: Նույնի, Գիտությունը և գիտահետազոտական աշխատանքները Խորհրդային Հայաստանում, Եր., 1931: Ատրպետ, Ճորոխի ավազանը, Վիեննա, 1929: Նույնի, Վիշապաց պաշտամունքը, Բազմավեպ, 1931, թիվ 7-8, էջ 308-319: Марр Н. и Смирнов Я., Вишапы, Труды Гос. Акад. Истории материальной культуры, т. I, 1931; Նույնի, Les Vichaps, Leningrad, 1931: Մ. Արեղյան, Երկեր, է, Եր., 1975, էջ103-171: Խանզադյան Է., Լճաշենի վիշապը, Հին Հայաստանի մշակույթը, XIII, նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի, Եր., 2005, էջ 86: Բարսեղյան Լ., Խաչատրյան Ժ., Քալանթարյան Ա., Նորահայտ պաշտամունքային կոթողներ Գեղամա լեռներից, Հայկ.ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր հաս. գիտ.», 1964, թիվ 8, էջ 85-88: Եգանյան Լ., Պաշտամունքային նորահայտ կոթողներ Շիրակից, ՇՊՄԺ հանրապետական 7-րդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի 2007, էջ 25:*

Աշխարհաստեղծման հիմնարար տարերքներից մեկը ջուրն է: Տարբեր դիցաբանություններում ջուրը նախասկիզբն է, ամեն մի էականի ելակետ և նախնական քաոսի համարժեքը, և աշխարհը հառնում է նախաստեղծ օվկիանոսից: Ջրային հրեշը արարիչ աստծու գործընկեր է աշխարհի ստեղծման դեմոնային մենամարտում, միաժամանակ նյութ՝ աշխարհի արարման համար: Ջուրը միջավայր է, ազդակ և սկզբունք համընդհանուր բեղմնավորման համար: Սակայն բեղմնավորումը պահանջում է ինչպես իգական, այնպես էլ արական սկիզբ: Այստեղից էլ՝ դիցաբանության երկու տեսակետ: Իգական սկզբի դերում ջուրը հանդես էլ գալիս իբրև մայրական արգանդի համարժեք: Միաժամանակ անհատակ ջուրը, կամ վիհը մարմնավորող այդ հրեշը վտանգի կամ մահվան այլաբանություն է[2]: Ջրային հրեշի որովայնը (արգանդը) անդրաշխարհն է, այնտեղից դուրս գալը՝ վերածնունդ: Ջրի հետ են կապվում ծննդի և մահվան, պտղաբերության և բերքատվության մասին առասպելները, որոնցում արտացոլված են կենդանի և մեռած ջրի երկնային՝ կյանք պարգևող և ստորին՝ երկրային, խմելու և ոռոգման համար ոչ պիտանի աղի ջրի հետ հավատալիքներ, սովորույթներ և ծեսեր:

Ջրային հրեշ, օձ, վիշապ անուններով նախասկիզբ էակի իմաստաբանությունը մեզ հասել է ժայռապատկերների, *վիշապ* անունը կրող կոթողների, հնագիտական գտածոների, խեթական գրավոր աղբյուրների, վեդայական գրականության, հայ առասպելաբանությամբ մեզ հասած հնագույն դիցաբանական ընկալումներից սերված պաշտամունքային վկայությունները միջոցով:

Օձ-վիշապ դիցաբանական ընկալումների հնագույն վկայությունները Եվրոպայի, Ասիայի և Ամերիկայի մեգալիթյան որսորդների կողմից արված ժայռապատկերներ են, որոնք գտնվում են ափամերձ ժայռերի վրա, երբեմն էլ՝ ջրի մոտ:

Ընդարձակ տարածք ընդգրկող Հայաստանի ժայռապատկերներում վերարտադրված է ժամանակի կենդանական աշխարհը, որը վերաբերում է մ.թ.ա. V-II հազա-

---

[2] *Апоп- МНМ. Энциклопедия, т. 1, М., 1991, стр. 96.*

ղամյակների հոգևոր ու նյութական կյանքին:[3] Հ. Մարտիրոսյանը դիպուկ է բնորոշել, որ «հայոց լեռների այն հատվածները, որտեղ գտնվում են ժայռապատկերները, եղել են Հայկական լեռնաշխարհի նախնադարյան որսորդ-անասնապահների սրբավայրեր, հին արվեստի ու պաշտամունքի *«տաճարներ»* են[4]: Ելնելով այն փաստից, որ այդ ժայռապատկերներն արված են հիմնականում գետերի ակունքների և ջրերի մոտ, կարելի է ենթադրել, որ այդ պատկերները նկարելը եղել է ծես: Հավանաբար պաշտվել են ջուր խորհրդանշող ատվածությունները, հնարավոր է՝ հենց ջրի մոտ են կատարվել ծիսական արարողություններ:

Օձ-վիշապի պաշտամունքային դերի ձևավորման հիմքում հնագույն դիցաբանական ընկալումներն են, ըստ որոնց՝ աշխարհը պատկերացվում էր ծառի կամ նրա նման վեր տացող ծիսական կառույցի տեսքով: Աշխարհի կենտրոնից բարձրացող Սրբազան առանցքն ըստ արմատ, բուն, գագաթ համապատասխան հատվածների, բաժանված էր ստորին, միջին և վերին աշխարհների, և յուրաքանչյուր շնչավոր և անշունչ էակի, ըստ որոշակի դասդասման, հատկացված էր իր տեղը[5]: Ըստ այդ դասդասման՝ *Միջին աշխարհի* վայրի կենդանիները կամ աստծու կենդանիները հակադրվում են *Սրբազան առանցքի* արմատների մոտ՝ ստորերկրյայքում կամ ջրի մեջ տեղադրված *Ներքևի աշխարհի* կենդանիներին: *Ներքևի աշխարհը* կամ անդրաշխարհը հնդեվրոպական դիցաբանության մեջ ամենայն հավանականությամբ խորհրդանշվում էր *b^(h) ud^(h)-n-տերմինով, որն արտացոլված է հին հնդկական budhna- հատակ, հիմք, հենարան, ներքևի մաս, արմատ իմաստներով, իսկ հայերենում՝ անդունդ (ան-դունդ) բառով: Ըստ հին հնդկական դիցաբանական պատկերացումների՝ Տիեզերական ծառի կամ Սրբազան առանցքի ներքևում գտնվում է դիցաբանական Ahi-Budhnyn-ն (տառացիորեն՝ Խորքերի Օձ)[6]: Հինհնդկական և հունական դիցաբանական *օձին* իր գործառույթով համապատասխանում են նաև *Էդդայում* ծառի արմատի մոտ գտնվող արաբածը[7] և *օձը* խեթական ծիսակարգում[8]: «Ներքևի» ատվածությունը համարվել է դիցաբանական օձը: Քանի որ նրա ոլորտը ոչ միայն հողն էր, այլ նաև երկրային ջրերը, հին դիցաբանություններում ոչ հաճախ օձը և ձուկը նույնացվել են: Շումերերենում muš-ki նշանակում է օձ-ձուկ[9]:

Օձի հետ կապված դիցաբանական հիմնական մոտիվը գերագույն ատվածության հակամարտությունն է *«ստորերկրյայքի* կամ *Ներքևի աշխարհի»* մարմնավորման հետ: Գերագույն ատվածության մենամարտը Օձ-Վիշապի հետ ամենաբնորոշն է Մերձավոր Արևելքի և Կովկասի դիցաբանական բոլոր տվորություններում՝ սկսած գրավոր ամենավաղ՝ շումերական աղբյուրներից մինչև միջնադարյան և նոր ժամանակների բանահյուսական սյուժեները[10]:

---

[3] *Կարախանյան Գ., Սաֆյան Պ., Հայաստանի հնագիտական հուշարձանները,, Սյունիքի ժայռապատկերները, հ. 4, պրակ I, Եր., 1970, էջ 6-16:*

[4] *Մարտիրոսյան Հ., Գիտությունն սկսվում է նախնադարում, Եր., 1978, էջ 9:*

[5] *Гамкрелидзе Т., Иванов Вяч., Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тб., 1984, стр. 485.*

[6] *Նույն տեղում, էջ 488-489:*

[7] *Dumézil G., Notes sur le bestiaire cosmique de l'Edda et du RgVeda (« Mélanges de Linguistique et de Pilologie», Fernand Mossé in memoriam, Paris: 1959, p.104-112): Գամկրելիդզե Տ., Իվանով Վյաչ., նշվ. աշխ. էջ 489:*

[8] *Гамкрелидзе Т., Иванов Вяч., 1984, стр. 489.*

[9] *Голан А., Миф и символ, М., 1992, стр. 77.*

[10] *Иванов В., Топоров В., Исследования в области славянских древностей, М.,1974, стр. 136.*

Խեթական գրավոր աղբյուրներից հայտնի Վուռուլիան (այլ տարբերակ՝ Պուրուլիա) խաթական ծագմամբ Նոր տարվա տոն է: Այդ տոնի ժամանակ քրմերից մեկը պատմում էր Ամպրոպի աստծու պայքարը illuyanka Օձի դեմ[11]: Ենթադրվում է, որ Վիշապի դեմ Ամպրոպի աստծու պայքարը ներկայացնող ծեսն ընկալվում էր որպես երկիրը «պաշտպանելու» միջոց, վերարտադրում էր երկրի և թագավորի վերածնունդը, որպես բերքատվության, մասնավորապես երկիրը տեղումներով ապահովելու անհրաժեշտ պայման[12]:

Հնդեվրոպական արխայիկ դիցաբանական մոտիվներում ներկայացվում է Օձի սպանությունը նրա աստվածային հակառակորդի կողմից: Ռիգվեդայում Վիշապին սպանած Ինդրան հանդես է գալիս որպես տիեզերական կարգուկանոնը վերականգնող դեմիուրգ: Առաջինը որ կատարեց Շանթաձիգը, սպանեց Օձին, բացեց ջրերի հունը, ճեղքեց լեռների ընդերքը[13]: Ինդրան, օձին սպանելով, վերականգնեց կարգուկանոնը՝ ծնելով արևը, երկինքն ու արշալույսը,[14] Վրիթրայի սպանությունը մեկնաբանվում է որպես կոսմոգոնիկ սխրանք[15]: Նա սպանեց ծնված օձերից առաջինին[16]: Հայոց առասպելաբանության մեջ վիշապասպանի հետ կապվում է Վահագնը, որ Խորենացու վկայությամբ «...*ընդ վիշապաց աստէն յերգին կռուել նմա և յաղթել*»[17]:

Վիշապաքաղ -Շանթառաքի մարտը Հին տարվա ավարտին և Նոր տարվա շեմին է, և հենց նրա հաղթանակով է սկսվում տիեզերական կարգուկանոնը:

Նույն ակունքից են սերում նաև վիշապների մասին դիցաբանական հայտնի պատումները, որոնցում տիրական է ջրի ակունքը փակող օձ-վիշապին մարդկային զոհեր մատուցելով ջրի հոսքը վերականգնելու մոտիվը:

Օձի և ջրի դիցաբանական կապվածության մասին է վկայում հին հնդկական դիցաբանության մեջ գետի առաջացման մասին առասպելը. Ինդրան, հաղթելով Վրիթրու օձին, ազատում է ջրերը, որոնք նա պահում էր կալանքի տակ, և «...*ջրերը հոսեցին նրա մարմնի վրայով, ինչպես գետի հունով*»: Հնագույն դիցաբանական այս ընկալումներն արտացոլված են Հայաստանի լեռներում հայտնաբերված *վիշապներ* կոչվող կոթողների պատկերազարդումներում. ինչպես, օրինակ, Իմիրզեկից գտնված բազալտից կերտված ձկան վրա քանդակված ցուլի բերանից հոսող ջուրը[18] կամ Գյոլյուրտից հայտնաբերված մեկ այլ վիշապի վրա ջուր խորհրդանշող ալիքավոր գծերի հետ պատկերված օձը:[19]

Անձրևների նվազման ժամանակ ջրի մոտ սողացող օձն արդեն իսկ նախնադարյան երկրագործի գիտակցության մեջ կապված էր տեղացող անձրևի իր համար անհասկանալիության հետ[20]: Օձի իրական հատկանիշները՝ հողի տակ և հողի վրա ապրելը, կաշին փոխելը և կենսունակությունը վերականգնելը պաշտամունքի ձևավորման հենքն են: Առասպելաբանության մեջ օձը դարձել է երկարակեցության, իմաստության և վերածննդի խորհրդանիշ: Օձը ստորին աշխարհի աստվածացված տիրական մարմնավորում է: Օձը՝ որպես երկրային ջրերի ընդերքի նախընտրելի արական

---

[11] *Ардзинба В., Ритуалы и мифы Древней Анатолии,М.,1982,стр. 27.*

[12] *Նույն տեղում, էջ 26-28:*

[13] *Ռիգվեդա, I 32, 1:*

[14] *Նույն տեղում, I 32, 4:*

[15] *Նույն տեղում, I 32, 5:*

[16] *Նույն տեղում, I 32, 3:*

[17] *Մ. Խորենացի, Գլուխ I, լա:*

[18] *Աբեղյան Մ., Երկեր, հ. Ա, Եր., 1975, էջ 175, նկ. 7:*

[19] *Նույն տեղում, էջ 172, նկ. 2:*

[20] *Рыбаков Б., Космогония и мифология земледельцев энеолита. СА, 1965, ном 1, стр. 36.*

աստվածությունն, կարող էր դիտվել իբրև պտղաբերության ուժերի մարմնավորում: Հնդկաստանում այն տան դռան վրա, ուր երեխա էր ծնվելու, կարմիր գալարներ էին նկարում և հավատում էին, որ այն օգնում է ծննդաբերությանը, քանի որ օձը, լինելով արական սկզբի խորհրդանիշ, համարվում էր բեղմնավորման հովանավոր[21]: Նույն հավատալիքից է սերում նաև հայոց հետևյալ տվյալությունը. «*Նորահարսը իր հարսանիքից հետո առաջին անգամ ջրի գնալիս՝ պաշտվող աղբյուրին ցորեն էր մատուցում*»[22], քանի որ ակունքից սկիզբ առնող առվակը զուգորդվում էր բեղմնավորման հովանավոր աստվածային օձի հետ[23]: Հայոց շատ զրույցներում օձերը գործող անձեր են, նրանք հաճախ հանում են իրենց օձեղեն շապիկը, դառնում գեղեցիկ երիտասարդներ և աղջիկների հետ ամուսնանում[24]: Եվ օձերը նախնի դիտելը անուղղակիորեն շեշտում է դիցաբանական ընկալումներում օձի՝ ֆալոսի դեր ունենալը:

Օձի կերպարը խտոնիկ բնույթ ունի: Օձը դժոխքի կամ անդրաշխարհի աստծու մարմնավորումն է, որը, իբրև օձի՝ կայծակի տեսքով բարձրանալով երկինք, ամպրոպ էր առաջացնում: Օձերի հետ կապված հավատալիքներում արտացոլված է դիցաբանական կերպարի երկակի բնույթը: Օրինակ, հույները վատ նշան էին համարում, եթե օձը տուն մտներ, հավանաբար այն պատճառով, որ հավատում էին, թե հանգուցյալների հոգիներն ապրում են օձերի մեջ[25]: Նման հավատալիք կա նաև լիտվացիների մոտ[26]: Իսկ օսերը հավատում են, որ օձի միսը թարմացնում է հանգուցյալների ներացող հոգիները[27]: Հայոց հավատալիքներում տնային անվնաս օձերին՝ լորտուկին կամ լոկին տան պահապան համարելը ևս նույն հավատալիքի հետ է կապվում:[28] Եվ եթե տան շեմի մոտ հայտնվում էր օձ, որին համարում էին *տան պահապան (դրվիք)*, ապա դուրս էին գալիս տանից ոչ թե օձին հեռացնելով, այլ վրայից անցնելով[29]: Այն հավատալիքը, թե մարմնից բաժանված հոգիները գոյատևում են օձերի կերպարանքով, կարող էր լինել և հայերիս մոտ: Մերթ իբրև օձ, մերթ իբրև մարդ հանդես եկող ոչ թունավոր օձերի *հայ* անվանումը ծագել է, անշուշտ, նրանից, որ հայոց մեջ ևս օձերը հնում որպես նախնիներ են ընկալվել[30]: Եվրոպայում օձին համարում էին և՛ հրեշավոր, և՛ բարերար[31]: Օձի նկատմամբ երկակի վերաբերմունքն արտահայտված է նաև Աստվածաշնչում. մի դեպքում այն մարդկային ցեղի թշնամի է, մյուս դեպքում Մովսեսը պատվիրում է պղնձից օձի պատկեր պատրաստել, որով պիտի դարմաներ հիվանդներին[32]:

Հազարավոր տարիներ առաջ ստեղծված ժայռապատկերներում և *վիշապ* կոչվող կոթողներում, այնուհետև նաև գրավոր աղբյուրներով և բանավոր ավանդությամբ մեզ հասած հավատալիքներում արտահայտված է բնության ուժերի դեմ նախնադարյան մարդու մղած պայքարի, այդ ուժերն իրեն ենթարկելու զուր ճիգերից մինչ օձ-վիշապին պաշտամունքի աստիճանի բարձրացնելը:

---

[21] *Голан А., նշվ. աշխ., էջ 45:*
[22] *Արեղյան Մ., նշվ. աշխ., էջ 52:*
[23] *Голан А., նշվ. աշխ., էջ 77:*
[24] *Արեղյան Մ., նշվ. աշխ., էջ 65:*
[25] *Голан А., նշվ. աշխ., էջ 81:*
[26] *Նույնը:*
[27] *Gimbutas M. Ancient symbolism in Lithuanian folk art. (Memoirs of the American Folklore Soiciety, v. 49), Philadelphia, 1958, 35.*
[28] *Նույն տեղում, էջ 63:*
[29] *ԴԱՆ, հեղինակի գրառումներից, Աշոցք:*
[30] *Արեղյան Մ., 1975, էջ 64:*
[31] *Клингер Х., Животные в античном и современном суеверии, Киев, 1911, стр. 170,171.*
[32] *Голан А., նշվ. աշխ., էջ 81:*

Մեծ Մեպասարի պեղումներով փաստված է, որ տարի գագաթը դիտվել է իբրև պաշտամունքային հնագույն կառույցների համար անհրաժեշտ նախապայմանները բավարարող տարածք՝ աստվածայինի հետ կապվող տարրերով. սարը աստվածների բնակարան, հյուսիսային կողմում գտնվելը՝ երկրի կենտրոն, ջուրը՝ աշխարհի եռամաս կառույցի բաղադրիչներից մեկը՝ հակադիր աշխարհների և վիճակների բաժանարար, քարանձավը՝ դեպի ստորերկրայք տանող մուտք:[33] Դիցաբանական այս նախադրյալների առկայությամբ էլ պայմանավորվել է սարի գագաթին սրբարանի կառուցումը, իսկ այստեղ փաստված գայլերի զոհաբերության ծեսը, որը նպատակ է ունեցել մոգականորեն ազդել բնության վրա, կատարվել է գարնանը, խորհրդանշել է Հին տարվա ավարտն ու Նորի սկիզբը: Մահվան միջոցով նորի ծնունդն ընկած է Տիեզերքի կարգուկանոնի կայունության ապահովման նվիրված ծեսերի հիմքում: Իսկ Շանթառաքի մարտը տեղի էր ունենում Հին տարվա ավարտին և Նոր տարվա շեմին, և նրա հաղթանակով է սկսվում տիեզերական կարգուկանոնը, որի համար մղվող պայքարի հիմքում Ամպրոպի աստծու կողմից Օձ-Վիշապի սպանությունն է: Մեծ Մեպասարի վիշապն առասպելական այդ պայքարի *քարեղեն վկայություն* է:

ДРАКОН МЕЦ СЕПАСАРА

___ *Резюме* ____ ___*Л. Еганян*___

На западном склоне горы Мец Сепасар, параллельно реке Ахурян, находится огромный каменный дракон длиной 150 метров.Он натуральный или выложен из камней. Мнения по этому вопросу расходятся: одни утверждают, что это результат коррозии, другие уверены, что это творение человека.

В Армении издревле известны каменные изваяния – вишапы-драконы, которые найдены в богатых водными ресурсами местах и связаны с почитанием воды.

Гора Мец Цепасар воспринималась как ритуальное пространство, где наличие нужных предпосылок (гора, река, пещера) стало основой для строительства святилища.

---

[33] *Եգանյան Լ., Մեծ Մեպասարի վրա սրբարանի կառուցման դիցաբանական հենքը, ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. XIII, Եր., 2010, էջ 11:*